ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԶԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ ՄԱՄԲՐԵԻ

ՈՍՏԻԿԱՆԻ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ

ԺԹ.00.01.- §Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն¦ մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Հրանտ Միքայելի Ավանեսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Ասյա Սուրենի Բերբերյան

հոգեբանական գիտությունների թեկնածու Կարինե Արամի Սահակյան

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. մարտի 7-ին ժամը 12.00-ին Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ. փետրվարի 6-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների դոկտոր՝ Կ.Ե. Վարդանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մեր երկրի զարգացման արդի փուլում առանձնահատուկ նշանակություն ունեն ոստիկանության բարեփոխումների, դրա գործունեության վերակողմնորոշման հարցերը՝ հաշվի առնելով ոստիկանության առջև պետության և հասարակության կողմից դրված խնդիրների կարևորությունը: ՀՀ ոստիկանության գործունեության բարեփոխումների ծրագրով նախատեսված հայեցակարգային փոփոխություններն ընդհանուր առմամբ միտված են ոստիկանության հանդեպ բնակչության վստահության բարձրացմանը: ԵԱՀԿ փորձագետների գնահատմամբ՝ ՀՀ ոստիկանության գործելակերպը, լուրջ վերափոխումներով հանդերձ, դեռևս պահպանում է ավանդական ուժային մոտեցումը՝ շեշտադրելով հանցավորության դեմ պայքարը, մինչդեռ ոստիկանության աշխատանքի եվրոպական մոդելի հիմքում «հանրային ծառայության» փիլիսոփայությունն է, որի նպատակն է երաշխավորել մարդու անվտանգությունը, ծառայությունը կատարել ոչ թե պարտադրող, այլ վստահություն ներշնչող եղանակով, տեսանելի մասնակցության ոճով:Հանրային սպասարկման հայեցակարգին անցումը ոստիկանության գործունեության մեջ էական փոփոխություններ է ենթադրում՝ նոր պահանջներ ներկայացնելով ոստիկանի անձին:Տևական սոցիալական վերափոխումներ ապրող հասարակությունն իր հերթին որոշակի սպասելիքներ ունի ոստիկանից՝ նրան մշտապես պահելով ուշադրության կիզակետում: Ոստիկանի՝ հասարակության մեջ ձևավորված կերպարը ոչ միայն ազդում է նրա աշխատանքի արդյունավետության վրա՝ կանխորոշելով ոստիկանության հետ կառուցողական համագործակցության դիրքորոշումը, այլև որոշում է բնակչության վերաբերմունքը պետական իշխանության հանդեպ առհասարակ: Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների հետազոտումը: Ոստիկանի գործունեության բնույթի հայեցակարգային փոփոխությունները, ոստիկանի անձին ներկայացվող նոր պահանջները, փոխակերպվող հասարակության իրողությունները, սոցիալական ընկալումների համակարգի վերակազմավորումները, ինչպես նաև այն, որ ոստիկանի անձի և գործունեության հոգեբանական յուրահատկությունները ներկայումս գրեթե հետազոտված չեն հայ իրականության մեջ, պայմանավորում են ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության բնորոշ առանձնահատկությունների հոգեբանական վերլուծության, ոստիկանի կերպարի յուրատիպության հետազոտության այժմեականությունը:

Ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների, ոստիկանական առանձին մասնագիտացումների աշխատանքի նկարագրի և այդ ոլորտի այլ խնդիրների հետազոտությամբ զբաղվել են ռուսական հեղինակներ Վ.Լ.Վասիլևը, Ա.Մ.Ստոլյարենկոն,Վ.Վ.Ռոմանովը, Յու.Վ.Չուֆարովսկին, Վ.Ն.Սմիրնովը, Ս.Պ. Բեզնոսովը և այլոք: Հասարակության մեջ ոստիկանության և ոստիկանի հանդեպ վերաբերմունքի և նրա կերպարի յուրահատկությունները, դրա ձևավորման վրա ազդող գործոնները դիտարկվել են Ա.Ա.Սեմիկի, Տ.Ա.Բոնդարենկոյի, Տ.Վ.Ագապովայի, Ս.Վ.Տաբանի և այլոց աշխատանքներում: Արևմտյան գրականության մեջ ներկայացվում են ոստիկանի անձի և ոստիկանական ենթամշակույթի ձևավորման յուրահատկությունները, մշակված են ոստիկանի անձի տիպաբանական մոտեցումներ (Ջ.Սկոլնիկ, Ջ.Լեֆկովիչ, Ն.Գրիֆին և այլոք): Աշխատանքում տեղ են գտել նաև հայ հեղինակների հետազոտությունները անձի և աշխատանքային գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ (Ռ.Վ.Աղուզումցյան, Հ.Մ.Ավանեսյան, Ս.Ռ.Գևորգյան, Ն.Ռ.Հակոբյան, Մ.Պ.Մկրտումյան, Ա.Բ.Լոքյան, Է.Վ.Ասրիյան, Ն.Գ.Խաչատրյան, Վ.Ռ.Պապոյան և այլոք), սակայն դրանք ուղղակի չեն առնչվում ոստիկանի անձի և գործունեության հարցերին: Փոքրաթիվ հետազոտություններում, որոնք որևէ կերպ առնչվում են խնդրո առարկային, արծարծվում են իրավապահ գործունեության որոշ յուրահատկություններ (Է.Գրին), իրավապահ մարմինների աշխատակիցների անձնային որոշ բնութագրեր (Ա.Առաքելյան), ոստիկանի մասնագիտական պիտանիության համալիր գնահատման ալգորիթմի մշակման (Հ.Մ.Ավանեսյան) հարցերը, նշվում են կերպարի որոշ գծեր (Ռ.Հ.Սարգսյան): Այսպիսով, ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության վերաբերյալ գրականության վերլուծությունը բացահայտեց,որ նշված հիմնախնդրի մշակվածության աստիճանը բավարար չէ, քանի որ առկա հետազոտությունները հիմնականում խորհրդային շրջանի են կամ կրում են նման երանգ, դրանց մի մասն էլ գիտական հիմնավորում չունի:

Հաշվի առնելով խնդրի արդիականությունը և հրատապությունը, դրա գիտագործնական կարևորությունը, ոչ բավարար գիտական մշակվածությունը, առհասարակ ժամանակի հրամայականին համահունչ ոստիկանության դերի հայեցակարգային փոփոխությունները՝ որոշվեց ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունների հիմնախնդրի՝ իբրև ատենախոսության թեմայի ընտրությունը:

Ատենախոսության տեսամեթոդաբանական հիմք են ծառայել համակարգայնության, պատճառականության, գործունեության արտաքին և ներքին կողմերի միասնության սկզբունքները և այլն: Ոստիկանի գործունեության և անձի առանձնահատկությունները դիտարկվել են գործունեական մոտեցման դիրքերից (Ս.Լ. Ռուբինշտեյն, Ա.Ն.Լեոնտև, Բ.Գ.Անանև, Բ.Ֆ.Լոմով, Կ.Ա.Աբուլխանովա-Սլավսկայա և այլոք)՝ որպես հոգեկան գործընթացների, երևույթների և հատկությունների վերլուծության մեթոդաբանական հիմք, որտեղ գործունեությունը համարվում է մարդու հոգեկանի և անձի զարգացման շարժիչ ուժ: Ոստիկանի գործունեության հոգեբանական վերլուծությունը կատարվել է Ս.Պ.Բեզնոսովի՝ գործունեության նորմատիվ նկարագրության մեթոդաբանական մոտեցման միջոցով: Ատենախոսության տեսամեթոդաբանական բազան համալրած իրավաբանական և ինստիտուցիոնալ մոտեցումները թույլ են տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել ոստիկանության գործառնության նորմատիվ-իրավական շրջանակների և պայմանների մասին: Աշխատանքում տեղ են գտել հոգեբանության տարբեր բնագավառների բազմաթիվ հայեցակարգեր և դրույթներ, ինչպիսիք են անձի սոցիալ-հոգեբանական զարգացման տեսությունները (Ա.Ն.Լեոնտև, Ս.Լ.Ռուբինշտեյն, Բ.Գ.Անանև, Կ.Ա.Աբուլխանովա-Սլավսկայա, Ի.Ս.Կոն, Կ.Կ.Պլատոնով և այլոք), անձի պրոֆեսիոնալիզացիայի վերաբերյալ մոտեցումները (Վ.Դ.Շադրիկով, Ե.Ա.Կլիմով, Վ.Ա.Բոդրով, Ա.Կ.Մարկովա, Է.Ֆ.Զեեր, Լ.Ա.Կորոստիլևա և այլոք), անձի մասնագիտական զարգացման խնդիրները արևմտյան գրականության մեջ (Ֆ.Պարսոնս, Դ.Սյուպեր, Դ.Հոլանդ) և այլն: Ուրույն տեղ ունեն իմիջելոգիայի տեսական և կիրառական դրույթները (Գ.Գ.Պոչեպցով,Ա.Յ.Պանասյուկ,Վ.Մ.Շեպել և այլոք), ավտորիտար անձի հայեցակարգը (Է.Ֆրոմ,Թ.Ադորնո) և այլն:

Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունների փոխկապվածությունը, որոնք անդրադառնում են ժամանակակից ոստիկանի ինքնիրացման և կերպարի վրա:

Ըստ այդմ, առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

1) իրականացնել գիտական գրականության տեսական վերլուծություն՝ պարզելու ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության, ոստիկանի կերպարի և դրա ձևավորման վրա անդրադարձող գործոնների վերաբերյալ առկա մոտեցումները,

2) վերլուծել ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանական յուրահատկությունները և առանձնացնել դրա հիմնական բաղկացուցիչները,

3) փորձարարական հետազոտության միջոցով բացահայտել ոստիկանի անձնային բնութագրերը և նրա կերպարի առանձնահատկությունները,

4) ուսումնասիրել ոստիկանի մասնագիտական գործունեության և անձնային առանձնահատկությունների փոխկապվածությունը,

5) ուրվագծել ոստիկանի գործունեության հուսալիությանը նպաստող և նրա կերպարի շտկմանն ուղղված գիտագործնական որոշ առաջարկներ:

Առաջադրվել է հետևյալ **վարկածը**.

Ոստիկանին ներկայացվող պահանջների և սոցիալական ընկալումների համակարգի փոխակերպումները ազդում են նրա անձնային առանձնահատկությունների ձևավորման և դրսևորման վրա՝ խոչընդոտներ առաջացնելով մասնագիտական կայացման գործընթացում և բերելով մասնագիտական ձևախեղումների, որոնք անդրադառնում են ոստիկանի մասնագիտական ինքնիրացման գործընթացի վրա:

Հետազոտության **օբյեկտը** ոստիկանի անձը և մասնագիտական գործունեությունն է:

Հետազոտության **առարկան** ոստիկանի անհատական հոգեբանական առանձնահատկությունների դրսևորումներն են մասնագիտական գործունեության մեջ:

Ելնելով աշխատանքի նպատակից և խնդիրներից՝ ոստիկանի անձնային առանձնահատկությունների հետազոտության համար կիրառվել է մեթոդական համալիր գործիքակազմ, որը ներառում է.

ա) համագիտական մեթոդներ (գիտական գրականության տեսական վերլուծություն, համեմատում և ընդհանրացում),

բ) հոգեդիագնոստիկ մեթոդներ՝ փորձագիտական հարցում, թեստավորում (Կալիֆորնիական հոգեբանական հարցարան, Թ.Ադորնոյի F-սանդղակը, Վ.Վ.Բոյկոյի կոմունիկատիվ դիրքորոշման և հուզական այրման ախտորոշման մեթոդիկաները,Օ.Ֆ.Պոտյոմկինի՝ մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտում անձի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների ախտորոշման մեթոդիկան), ասոցիատիվ գիտափորձ, հարցաթերթային հարցում, ներգրավված դիտում,

գ) հետազոտության տվյալների բովանդակային և վիճակագրական վերլուծություն:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները.

1. Ոստիկանի՝ որպես մասնագիտական գործունեության սուբյեկտի անձնային հատկությունների ձևավորումն ու դրսևորումը պայմանավորված է աշխատանքի առանձնահատկություններով և դրանց

ներկայացրած պահանջներով: Վերջիններիս, ինչպես նաև ծառայողական փորձի, մասնագիտական միջավայրի, մասնագիտական պատրաստականության գործընթացի, հասարակական ակնկալիքների և պատկերացումների համակարգի և այլ գործոնների համալիր ազդեցության ներքո ձևավորվում է ուրույն մասնագիտական ենթամշակույթ՝ ոստիկաններին առանձնացնելով որպես որոշակի սոցիալ-հոգեբանական յուրահատկություններով բնորոշվող խումբ:

2. Ոստիկանների մոտ մասնագիտական կայացման գործընթացում մասնագիտական գործունեության ազդեցության ներքո ձևավորվում և դրսևորվում են անձնային նման հատկանիշներ, ինչպիսիք են ավտորիտարությունը, դոմինանտությունը, պատասխանատվությունը, հուզական կայությունը, բարձր ինքնավերահսկողությունը, էմպաթիայի և տոլերանտության ցածր մակարդակը, անճկունությունը և այլն: Բացի այդ, ոստիկանի հաղորդակցման յուրահատկությունները հրահրում են հուզական այրում՝ հանգեցնելով մասնագիտական ձևախեղումների:

3. Ոստիկանի մասնագիտական գործունեության մեջ մշտապես առաջանում են տարաբնույթ իրարամերժ գործոններ, որոնք հանդես գալով իբրև նրա գործունեության վրա ներազդող՝ մասնագիտական միկրոմիջավայրի և հասարակական սոցիալ-հոգեբանական մակրոմիջավայրի պահանջների անհամատեղելիության արդյունք, կարող են հանգեցնել մասնագիտական ձևախեղումների՝ խոչընդոտներ առաջացնելով ոստիկանի մասնագիտական ինքնիրացման գործընթացում:

4. Ոստիկանի մասնագիտական ինքնիրացումը պայմանավորված է նաև նրա կերպարով, որը ձևավորվում է տարաբնույթ գործոնների ազդեցության արդյունքում: Այդ գործոնները ոստիկանին ներկայացվող սոցիալական սպասելիքների և պատկերացումների համակարգի հետ միասին որոշում են ոստիկանի կերպարի բովանդակությունը և դրա ընկալման հոգեբանական նախադրյալները:

Հետազոտությունը կատարվել է մի շարք հաջորդական փուլերով՝ խնդրո առարկայի վերաբերյալ գրականության տեսական վերլուծություն, հետազոտության մեթոդաբանության ընտրություն և ռազմավարության մշակում, հոգեախտորոշիչ մեթոդների ընտրություն, ընտրանքի ձևավորում, փորձագիտական հարցում, մեթոդիկաների անցկացում, արդյունքների հավաքագրում և մշակում, արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովել են դրա տեսամեթոդաբանական հիմքերը, հետազոտության նպատակին համահունչ հուսալի մեթոդական

գործիքակազմի կիրառումը, ընտրակազմի ներկայացուցչականությունը, տվյալների վերլուծությունը մաթեմատիկական վերամշակման մեթոդների և ավտոմատացված վիճակագրական ծրագրերի միջոցով:

Աշխատանքի գիտական նորույթը: Առաջին անգամ հայրենական գիտահետազոտական աշխատանքների ոլորտում, հաշվի առնելով ոստիկանի գործունեության դերի և բնույթի հայեցակարգային վերափոխումները և դրանց՝ ոստիկանին ներկայացրած նոր պահանջները, դիտարկվում են ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության առանձնահատկությունները և դրանց փոխպայմանավորվածությունը, իրականացվում է ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանական վերլուծություն՝ նկարագրելով աշխատանքի առարկան, դրդապատճառը, նպատակը, խնդիրները, լուծման միջոցները, արդյունքը, աշխատանքի եղանակները և պայմանները, ժամանակային և այլ չափորոշիչները, ինչպես նաև այդ ամենի ազդեցությունը աշխատակցի անձի վրա: Ներկայացվում են այդ գործունեության մեջ առկա տարաբնույթ անհամատեղելի, իրարամերժ գործոնները, դիտարկվում է նաև մերօրյա ոստիկանի կերպարի հոգեբանական յուրատիպությունը:

Աշխատանքի տեսական նշանակությունը: Աշխատանքը կարող է համալրել ոստիկանի գործունեությանը, անձին և կերպարին վերաբերող տեսական գիտելիքները, խթանել ոստիկանի գործունեությանը և անձին առնչվող տեսական և գործնական հիմնախնդիրների ուղղությամբ հետազոտությունների իրականացմանը: Ստացված տվյալները կարող են օգտագործվել ուսումնամեթոդական գրականության մեջ, ուսումնական հատուկ դասընթացների մշակման համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Աշխատանքում առաջ քաշված տեսական մոտեցումները, գործնական առաջարկները, հետազոտության արդյունքների ներդրումը կարող է օգտագործվել ոստիկանության գործունեության հուսալիության բարձրացման, ոստիկանի պատշաճ կերպարի ձևավորմանն ուղղված միջոցառումների մշակման նպատակով: Ստացված տվյալները կարող են օգտագործվել թրեյնինգային ծրագրերի մշակման և դրանց գործնական կիրառության համար՝ ուղղված ոստիկանի անձնային այն որակների զարգացմանը, որոնք կնպաստեն մասնագիտական գործունեության հուսալիության բարձրացմանը, ոստիկանի դրական կերպարի ձևավորմանը: Կարելի է նաև մշակել և ներդնել մասնագիտական-հոգեբանական պիտանիության գնահատման համակարգ, որը, հիմնվելով մասնագիտական համապատասխան չափանիշների վրա, կհամալրի անձնային որակների համապատասխանությունը կոնկրետ պաշտոնի պահանջներին:

Աշխատանքի փորձարկումն ու ներդրումը: Աշխատանքը ներկայացվել է ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի նիստում, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի և Կրթահամալիրի հասարակագիտական առարկաների ամբիոնի նիստերում, ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլ. և հոգեբ. ֆակուլտետի 50-ամյակին նվիրված (ԵՊՀ 2014), §Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները¦ V (ԵՊՀ 2015), §Психология и коммуникация в правовой системе¦ (Մոգիլև, Բելառուսի Հանրապետություն 2016) միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության նյութերի հիման վրա հեղինակի կողմից մշակվել է «Ոստիկանի մասնագիտական գործունեության հոգեբանություն» ուսումնական դասընթացը, որը 2014թ. ներդրվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մագիստրատուրայի ուսումնական ծրագրում: Հրատարակվել են նաև «Ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները» վերնագրով ուսումնական և «Կոնֆլիկտները և դրանց կառավարումը» վերնագրով ուսումնագործնական ձեռնարկները, որոնք օգտագործվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական գործընթացում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, գրականության ցանկից (155 աղբյուր), 3 հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմել է 170 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, այն ուսումնասիրելու մեթոդաբանական հիմքերը, նպատակը և խնդիրները, առաջադրված վարկածը, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները, աշխատանքի գիտական նորույթը, ձևակերպվել է տեսական և գործնական նշանակությունը, առաջադրվել են պաշտպանության դրույթները:

Ատենախոսության **առաջին՝ «Ոստիկանի գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունների վերլուծությունը» գլխում** ներկայացվում են անձի զարգացման մեջ գործունեության վճռորոշ դերի, աշխատանքային գործունեության հոգեբանական վերլուծության, անձի վրա մասնագիտության ազդեցության և այլ հարցեր, դիտարկվում են ոստիկանի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, ոստիկանի մասնագիտական ձևախեղման վերաբերյալ հայացքները: Անցկացվել է ոստիկանի գործունեության

հոգեբանական վերլուծություն՝ առանձնացնելով աշխատանքի առարկան, դրդապատճառը, նպատակը, խնդիրները, եղանակները, արդյունքը, աշխատանքի պայմանները և դժվարությունները, ժամանակային և այլ չափորոշիչներ: Դիտարկվում են ոստիկանի գործունեության մեջ առկա տարաբնույթ անհամատեղելի, իրարամերժ գործոնները: Ներկայացվում են ոստիկանի անձի մի շարք հատկություններ, որոնք ձևավորվում և դրսևորվում են մասնագիտական գործունեության ազդեցության ներքո և որոշում են այդ գործունեության հուսալիությունը: Անդրադարձ է արվել նաև ոստիկանի մասնագիտական կերպարին որպես նրա գործունեության հուսալիությունը որոշող կարևոր գործոնի:

Ատենախոսության **երկրորդ՝ «Ոստիկանի անձնային առանձնահատկությունների փորձարարական հետազոտությունը» գլխում** նկարագրվում են հետազոտության մեթոդական համալիրը, փուլերը, համակազմը, հետազոտության արդյունքում ստացված էմպիրիկ տվյալները և դրանց վերլուծությունը:: Հետազոտությունը կատարվել է մի շարք հաջորդական փուլերով՝ դիտարկվող խնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն, հետազոտության մեթոդաբանության ընտրություն և ռազմավարության մշակում, ոստիկանի գործունեության հոգեբանական վերլուծություն, ընտրանքի ձևավորում, փորձագիտական հարցում, մեթոդիկաների ընտրություն և անցկացում, արդյունքների հավաքագրում, մշակում, դրանց վերլուծություն և մեկնաբանություն: Հետազոտության մեջ ընդգրկվել են ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների 18-57 տարեկան 1-30 տարվա մասնագիտական ստաժ ունեցող 147 ծառայող, որոնցից 11-ը մասնակցել են փորձագիտական հարցմանը, 136-ը՝ հետազոտության մյուս փուլերին, որոնցից ներկայացվում են 100-ի տվյալները: Հետազոտությունը անցկացվել է տարբեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ոստիկանների շրջանում՝ ապահովելով ընտրակազմի ներկայացուցչականությունը: Հետազոտությանը մասնակցել են նաև տարբեր սեռի, կրթության, զբաղվածության 18-38 տարեկան 100 քաղաքացիներ:

Ոստիկանի անձի վերաբերյալ տվյալների ստացման նպատակով կիրառված CPI-իմիջոցով հետազոտության արդյունքում (տես Նկ. 1) պարզվեց, ծառայողամասնագիտական փորձի աճին զուգընթաց դիտվում է CPI առանձին սանդղակների միավորների անկում. ի տարբերություն 10 և ավելի տարվա փորձ ունեցող ոստիկանների խմբի, մինչև 10 տարվա փորձ ունեցող ոստիկանների խմբում գրեթե բոլոր սանդղակներում միավորները տարբերվում են:



Նկար 1. CPI մեթոդիկայով ուսուցիչների խմբերի մոտ ստացված տվյալները՝ միավորների միջին արժեքներով

Ուսուցիչների 2 խմբերում ստացված տվյալները ենթարկվել են կոռելյացիոն վերլուծության Պիրսոնի գծային կոռելյացիոն բանաձևով N=50-ի համար,որտեղ կախվածությունները հավաստի են համարվում ($p \leq 0.05$)՝ սկսած r=0.27 գործակցից:

Սանդղակ	Կոռելյացիայի գործակից	Արժեքային մակարդակ	սանդղակ	Կոռելյացիայի գործակից	Արժեքային մակարդակ
Do	0.38	$p \leq 0.01$	Sc	0.28	$p \leq 0.05$
Cs	0.28	$p \leq 0.05$	To	0.27	$p \leq 0.05$
In	0.33	$p \leq 0.05$	F/M	0.32	$p \leq 0.05$

Աղյուսակ 1. Ուսուցիչների խմբերում CPI սանդղակների կոռելյացիոն վերլուծության արդյունքները

Աղյուսակ 1-ում բերվում են բացահայտված նշանակալի կոռելյացիոն կապերը, որտեղ $r<0.27$, $p \leq 0.05$, $r>0.27$, $p>0.05$, և $r<0.35$, $p \leq 0.01$, $r>0.35$, $p>0.01$: Ինչպես պարզվեց, առկա է կոռելյացիոն կապ Do սանդղակի ցուցանիշների միջև՝ r=0.38 որպես հավաստի կապ վիճակագրական արժեքի $p \leq 0.01$ մակարդակում: Բացահայտվել է նաև չափավոր կոռելյացիոն կապ In (r=0.33), F/M(r=0.32), Cs(r=0.28), Sc(r=0.28), To(r=0.27) սանդղակների ցուցանիշների միջև, որոնք կարելի է դիտել իբրև հավաստի կապի միտում վիճակագրական արժեքի $p \leq 0.05$ մակարդակում: Բացահայտված վիճակագրական հավաստի տարբերությունները հիմք են տալիս ենթադրելու, որ մասնագիտական

փորձը որոշում է անձնային բնութագրերի արտահայտվածության աստիճանը, այսինքն՝ մասնագիտական գործունեությունը անդրադառնում է մասնագետի անհատական հոգեբանական առանձնահատկությունների դրսևորումների վրա:



Նկար 2. Ինքնիրացման մակարդակի ցուցանիշները ոստիկանների մոտ

Նկար 2-ի համաձայն՝ 10 տարուց քիչ փորձ ունեցող ոստիկանների 85%-ը ունի ինքնիրացման ցածր, 15%-ը՝ միջին մակարդակ, իսկ բարձր մակարդակ առհասարակ չի արձանագրվել: 10 և ավելի տարվա փորձ ունեցող ոստիկանների խմբում ևս գերակշռում են ինքնիրացման ցածր մակարդակի ցուցանիշները՝ 73%, թեև համեմատաբար բարձր են միջին (19%) և միջինից բարձր մակարդակների (8%) ցուցանիշները:

Ավտորիտարության մակարդակը չափող F–սանդղակ տեստի արդյունքները ցույց են տալիս, որ ոստիկանների մոտ ծառայողական փորձի աճին զուգընթաց բարձրանում է նաև ավտորիտարության մակարդակը (տե՛ս Նկար 3):



Նկար 3. Ոստիկանների մոտ ավտորիտարության մակարդակի ցուցանիշները

F-սանդղակով ստացված տվյալները համահունչ են CPI մեթոդիկայով ստացված տվյալներին, ինչի մասին են խոսում դրանց միջև ոստիկանների 2 խմբերում անցկացված կոռելյացիոն վերլուծության արդյունքները Պիրսոնի գծային կոռելյացիոն բանաձևով N=50-ի համար: Այս դեպքում կախվածությունները հավաստի են՝ սկսած r=0.27 գործակցից (p≤0.05): Կոռելյացիոն կապ բացահայտվեց ավտորիտարության մակարդակի և CPI-ի Do և Cs սանդղակների միջև (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. F-սանդղակի և CPI-ի սանդղակների արդյունքների կոռելյացիոն վերլուծության արդյունքները ոստիկանների երկու խմբերում

10 տարուց պակաս փորձ		10 և ավելի տարվա փորձ	
	Ավտորիտարություն		ավտորիտարություն
Do	r = - 0.28, p ≤ 0.05	Do	r=0.27, p≤ 0.05
Cs	r=0.32, p ≤ 0.05	Cs	r=0.21, p ≥ 0.05

Ոստիկանների մոտ հուզական այրման մակարդակի հետազոտման արդյունքների համաձայն, ոստիկանների առանձնացված խմբերի մոտ հուզական այրման համախտանիշի ընդհանուր պատկերում նշանակալի տարբերություններ գրեթե չեն բացահայտվել (տե՛ս նկար 4):



Նկար 4. Ոստիկանների մոտ հուզական այրման փուլերի ձևավորվածությունը

Ստացված տվյալները թույլ են տալիս հետազոտված ոստիկանների մոտ այրման համախտանիշը ընդհանուր առմամբ ձևավորված համարել, որում գերակայող հիմնական ախտանշաններն են հույզերի տնտեսման ոլորտի ընդլայնումը, մասնագիտական պարտականությունների ռեդուկցիան, բարոյահուզական ապակողմնորոշումը և ոչ ադեկվատ ընտրողական հուզական հակազդումը: Նշված ախտանշանները մտնում են հուզական այրման դիմադրության փուլի կազմի մեջ:

Հետազոտվածների մոտ ձևավորված է նաև հուզական այրման հյուծման փուլը իր ախտանշաններով՝ հուզական պակասով, հուզական և անձնային հեռացածությամբ, հոգեմարմնական խանգարումներով:

Ասոցիատիվ գիտափորձի միջոցով ոստիկանի կերպարի հետազոտումը ցույց տվեց, որ քաղաքացիների մոտ §ոստիկան¦ բառի առաջացրած զուգորդությունների 63%-ը բացասական երանգ ունի, 37%-ը դրական և չեզոք բնույթի են: Ոստիկանների մոտ նույն բառի առաջացրած զուգորդությունների 59%-ը դրական և չեզոք բնույթի են, 41%-ը՝ բացասական են (տե՛ս նկար 5):

Ասոցիատիվ գիտափորձի արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս ստանալ կերպար-բնութագրերի հավաքածու, որոնք բնորոշում են ոստիկանի կերպարի ընկալումը: Քաղաքացիների խմբում ստացված զուգորդությունները խմբավորվել են հետևյալ կատեգորիաներում՝ ա) մասնագիտական հաղորդակցման գործընթացում դրսևորվող որակներ, որոնք հիմնականում բացասական են, բ)մասնագիտական դերին ու կարգավիճակին վերագրվող հատկանիշներ, որոնք հիմնականում դրական և չեզոք բնույթի են, գ)արտաքին տեսքի առանձնահատկություններ և ֆիզիկական որակներ, որոնք առաջացնում են բացասական զուգորդություններ:



Նկար 5. Ոստիկանի վերաբերյալ զուգորդությունները քաղաքացիների և ոստիկանների մոտ

Ոստիկանի՝ սեփական կերպարի վերաբերյալ զուգորդությունները (աուտոստերեոտիպը) խմբավորվել են հետևյալ կատեգորիաներում՝ ա)մասնագիտական դերին և կարգավիճակին առնչվող հասկացություններ, որոնք գերակշիռ մաս են կազմում, բ)անձնային ու գործնական որակներն արտացոլող զուգորդություններ, որոնք առավելապես դրական են, գ)հոգեհուզական վիճակներն արտացոլող որակներ, որտեղ դրական որևէ զուգորդություն չի գրանցվել:

Հիմնվելով ասոցիատիվ գիտափորձի արդյունքների վրա, հասարակության մեջ ոստիկանի ընկալման կարծրատիպը՝ կերպարը, կարելի է բացասական համարել, որը մեծ չափով կախված է ոստիկանների՝ մասնագիտական հաղորդակցման ընթացքում դրսևորվող որակներից: Իսկ ոստիկանի աուտոստերեոտիպը, չնայած ընդհանուր դրական միտմանը, արտահայտում է ոստիկանի բացասական ինքնընկալումը և վկայում է նրա մասնագիտական ինքնիրացման գործընթացի խաթարման մասին:

Ոստիկանի հանդեպ հասարակության վերաբերմունքի հետազոտման արդյունքների (հարցաթերթային հարցման միջոցով) համաձայն ոստիկանների հանդեպ հանրության վերաբերմունքում գերակշռում են բացասական հուզական գնահատականները և կարծրատիպային բնութագրումները: Ինչ վերաբերում է ոստիկանի՝ սեփական մասնագիտության մասին սուբյեկտիվ պատկերացումների համակարգին, ապա հարցվածները հիմնականում բավարարված չեն իրենց աշխատանքով:Ընդհանրացնելով հարցման արդյունքները՝ կարելի է փաստել, որ ոստիկանի դրդապատճառային ոլորտում արտահայտված են ներքին՝ ընթացաբովանդակային դրդապատճառները, որոնք սոցիալապես հասուն են տվյալ գործունեության հուսալի իրականացման համար, թեև ոստիկանների մոտ դիտվում են սոցիալական երեսպաշտության որոշ դրսևորումներ՝ արտահայտվելով սոցիալապես կարևոր դրդապատճառների հոչակման, իրական վերաբերմունքի քողարկման ձևով:

Այսպիսով, հիմնվելով գրականության, նորմատիվ-իրավական ակտերի վերլուծության, ինչպես նաև ոստիկանի աշխատանքային գործընթացի և վարքի ներգրավված դիտման միջոցով ստացված տվյալների վրա, իրականացվել է ոստիկանի մասնագիտական գործունեության յուրահատկությունների հոգեբանական վերլուծություն: Ի մի բերելով հետազոտության արդյունքում ստացված տեսական և փաստական նյութը՝ պարզ է դառնում, որ ոստիկանի մասնագիտական գործունեության մեջ առկա են տարաբնույթ, տարբեր աստիճանի արտահայտվածության իրարամերժ գործոններ: Վերջիններս, հանդես գալով որպես ոստիկանի գործունեության վրա ներազդող՝ մասնագիտական միկրոմիջավայրի (մասնագիտության պահանջներ, գործունեական նորմեր, մասնագիտական մշակույթ և այլն), և ավելի լայն՝ հասարակական սոցիալ-հոգեբանական մակրոմիջավայրի (տվյալ հասարակության մեջ տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտը և արժեհամակարգը, սոցիալական ակնկալիքները, դիրքորոշումները, պատմական պատկերացումները և այլն) պահանջների

անհամատեղելիության արդյունք՝ վճռորոշ ազդեցություն են գործում նրա անձնային առանձնահատկությունների դրսևորման վրա: Ոստիկանի գործունեությանը բնորոշ այդ անհամատեղելի գործոնները խոչընդոտներ են առաջացնում նրա մասնագիտական կայացման գործընթացում՝ բերելով մասնագիտական ձևախեղումների:

Ամփոփելով անցկացված հետազոտության արդյունքները՝ կարելի է փաստել, որ ոստիկանը իբրև պաշտոնատար անձ բնութագրվում է մի շարք հատկանիշներով, որոնք ձևավորվում և դրսևորվում են նրա մասնագիտական կայացման գործընթացում մասնագիտական գործունեության ազդեցության ներքո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Ոստիկանի մասնագիտական գործունեության առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ գործունեությանը հատուկ են տարաբնույթ իրարամերժ գործոններ, որոնք ոստիկանի գործունեության վրա ներազդող՝ մասնագիտական միկրոմիջավայրի և հասարակական սոցիալ-հոգեբանական մակրոմիջավայրի պահանջների անհամատեղելիության արդյունք լինելով՝ խոչընդոտներ են առաջացնում ոստիկանի մասնագիտական կայացման գործընթացում և հանգեցնում են մասնագիտական ձևախեղումների՝ որոշակիորեն ազդելով ոստիկանի մասնագիտական ինքնիրացման գործընթացի վրա:

2. Ոստիկանի աշխատանքի առանձնահատկությունները սոցիալական իրողությունների, հանրային ակնկալիքների և դիրքորոշումների համակարգի հետ միասին որոշակի պահանջներ են ներկայացնում ոստիկանին՝ անդրադառնալով նրա՝ իբրև մասնագիտական գործունեության սուբյեկտի անձնային առանձնահատկությունների դրսևորման վրա: Աշխատանքի յուրատիպության, ոստիկանին ներկայացվող պահանջների, մասնագիտական պատրաստականության գործընթացի, ծառայողական փորձի, մասնագիտական հանրույթի և միջավայրի, ինչպես նաև ոստիկանի դերի և առաքելության, տիպիկ անձնային որակների մասին պատկերացումների և այլ գործոնների համալիր ազդեցության ներքո ձևավորված ուրույն մասնագիտական ենթամշակույթը ոստիկաններին

առանձնացնում է որպես որոշակի սոցիալ-հոգեբանական յուրահատկություններով բնորոշվող խումբ:

3. Գիտական շրջանառություն ներմուծված էմպիրիկ նյութը վկայում է, որ ուսումնասիրված ոստիկանների մոտ դրսևորվում են մի շարք անձնային հատկանիշներ, որոնք ձևավորվում և ամրապնդվում են նրանց մասնագիտական կայացման գործընթացում մասնագիտական գործունեության ազդեցության ներքո: Այդ որակներն են՝ պատասխանատվությունը, հուզական կայունությունը, բարձր ինքնավերահսկողությունը, ավտորիտարությունը, դոմինանտությունը, անճկունությունը, էմպաթիայի և տոլերանտության ցածր մակարդակը, ինքնիրացման ցածր մակարդակը, հուզական այրման բարձր մակարդակը և այլն: Ի լրումն սրա՝ ոստիկանների մոտ բացահայտված հուզական այրման բարձր մակարդակը վկայում է նրանց մոտ անձնային-մասնագիտական ձևախեղումների մասին: Ոստիկանների դրդապատճառային ոլորտը ունի կառուցողական ուղղվածություն և սոցիալապես հասուն է տվյալ գործունեության հուսալի իրականացման համար, թեև առկա են սոցիալական երեսպաշտության որոշ դրսևորումներ և աններդաշնակ կողմնորոշումներ:

4.Հետազոտված ոստիկանների մոտ բացահայտվել են մասնագիտական ձևախեղումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն աշխատանքի պայմանների օբյեկտիվ բարդությամբ և արտակարգությամբ, միջանձնային հարաբերությունների և մասնագիտական միջավայրի առանձնահատկություններով, այլև գործունեության արդյունավետությանը տրվող արտաքին և ներքին գնահատականի բնույթով, մասնագիտության կերպարով, աշխատանքի կատարման միջոցների, ոստիկանին ներկայացվող նոր պահանջների, նրա ավանդական դերի և առաքելության, հանրային արժեքների փոփոխություններով և այլ գործոններով: Այդ ձևախեղումները խոչընդոտում են ոստիկանի՝ իր մասնագիտական կարգավիճակի համապատասխան ընկալման, նրա հոգեբանական անվտանգության ապրման սուբյեկտիվ գնահատականի, առհասարակ մասնագիտական գործունեության մեջ անձի ինքնիրացման գործընթացի վրա:

5. Ոստիկանի մասնագիտական ինքնիրացումը որոշվում է նաև նրա կերպարով, որի բովանդակությունը և դրա ընկալման հոգեբանական նախադրյալները պայմանավորված են ոստիկանների անձնային և գործնական որակներով, ոստիկանին ներկայացվող պահանջներով, սոցիալական սպասելիքների ու պատկերացումների համակարգով և սոցիալ-հոգեբանական այլ գործոններով: Ոստիկանի՝ յուրահատուկ միտումներով ձևավորված կերպարում գերակայում են բացասական

հուզական գնահատականները և կարծրատիպային բնութագրումները, որոնք հիմնականում կախված են ուսուցիչի՝ մասնագիտական հաղորդակցման գործընթացում դրսևորվող անձնային որակներից: Իսկ ուսուցիչի աուտոստերեոտիպը, չնայած ընդհանուր դրական միտմանը, արտացոլում է ուսուցիչի բացասական ինքնընկալումը՝ վկայելով նրա մասնագիտական ինքնիրացման գործընթացի խաթարման մասին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ **հրապարակումներում**.

1. Նազարյան Ն.Մ. Ուսուցիչի իմիջը՝ որպես հոգեբանության ուսումնասիրման առարկա. «Հոգեբանական հետազոտությունների արդի մարտահրավերները» երիտասարդ գիտնականների գիտաժողովի նյութեր. Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 30-33:
2. Նազարյան Ն.Մ. Ուսուցիչի կերպարի վրա անդրադարձող սոցիալ-հոգեբանական գործոնները, «Բանբեր Երևանի համալսարանի» Գիտական հանդես, Եր., ԵՊՀ հրատ., 2011, № 133.4, էջ 72-78:
3. Նազարյան Ն.Մ. Ուսուցիչի անձի մասնագիտական կարևոր որակների փորձագիտական գնահատում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2012, № 3(52), էջ 228-232:
4. Նազարյան Ն.Մ. Ուսուցիչի անձնային հատկանիշների ձևավորման վրա մասնագիտական ստաժի ազդեցությունը, «Вестник» РАУ, Изд-во РАУ, 2013, №2 (15), էջ 33-39:
5. Նազարյան Ն.Մ., Ավանեսյան Հ.Մ. Ուսուցիչների կոմունիկատիվ ոլորտի առանձնահատկությունների թեստավորման վերլուծություն, Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ: ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլ. և հոգեբ. Ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014.-492 էջ: Էջ 414-416:
6. Նազարյան Ն.Մ. Ուսուցիչի անձնային առանձնահատկությունների և գործունեության անհամատեղելի գործոնների հարաբերակցությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2016, №2 (647), էջ 109-113:
7. Նազարյան Ն.Մ. Մասնագիտական ձևախեղման որոշ առանձնահատկությունները ուսուցիչների մոտ, «Вестник» РАУ. Изд-во РАУ, 2016, №2 (23), էջ 160-164:
8. Նազարյան Ն. Ուսուցիչի մասնագիտական գործունեությանը հատուկ անհամատեղելի գործոնները, Կանթեղ: Գիտական հոդվածներ. - Եր., 2016, № 4(69), էջ 135-139:

НАЗАРЯН НАИРА МАМБРЕЕВНА

ОБУСЛОВЛЕННОСТЬ ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ ЛИЧНОСТИ СОТРУДНИИКА ПОЛИЦИИ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТЬЮ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01. “Общая психология, теория и история психологии, психология личности”.

Защита диссертации состоится 7 марта 2017 г., в 12.00 на заседании специализированного совета по философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность работы обусловлена тем, что концептуальные изменения характера деятельности сотрудника полиции, которые в целом направлены на повышение доверия населения к полиции, которые связаны с новыми требованиями, предъявляемыми к личности сотрудников, реалиями трансформационного общества и преобразованиями системы социальных восприятий. Тот факт, что психологические особенности личности и деятельности сотрудников полиции почти не исследованы в армянской действительности, подкрепляют своевременность психологического анализа характерных особенностей личности и профессиональной деятельности сотрудников полиции, исследование особенностей образа полицейского.

Цель исследования: Исследовать взаимосвязь психологических особенностей личности и профессиональной деятельности сотрудников полиции, которые отражаются на самореализации и образе сотрудника полиции.

Основные задачи исследования:

1.Провести теоретический анализ научной литературы для выяснения существующих подходов к определению личности и профессиональной деятельности сотрудников полиции, образа сотрудника и факторов, влияющих на его формирование.

2.Проанализировать психологические особенности профессиональной деятельности сотрудников полиции и выделить ее основные составляющие.

3.Эмпирическим путем выявить личностные характеристики сотрудника полиции и особенности его имиджа.

4.Исследовать взаимосвязь профессиональной деятельности и личностных особенностей сотрудника полиции.

5.Наметить некоторые научно-практические предложения, способствующие повышению надежности деятельности сотрудников и направленные на корректировку его образа.

Гипотеза исследования: Преобразование требований, предъявляемых сотрудникам полиции, а также к системе социальных восприятий влияет на формирование и проявление личностных особенностей сотрудников, вызывая препятствия в процессе профессионального становления и вызывая профессиональные деформации, которые сказываются на процессе профессиональной самореализации сотрудников полиции.

Научная новизна исследования: Впервые в области отечественных научно-исследовательских работ по психологии, имея ввиду концептуальные преобразования роли и характера деятельности сотрудника полиции и новые требования, которые, в свою очередь, они предъявляют к сотрудникам, рассматриваются особенности, взаимообусловленность личности и профессиональной деятельности сотрудника полиции. Раскрыты различные несовместимые, взаимоисключающие факторы, присущие этой деятельности, психологическое своеобразие образа сегодняшнего сотрудника полиции. Проводился психологический анализ профессиональной деятельности сотрудника полиции с выделением предмета, цели, мотивов, задач, средств решения, результатов, способов и условий работы, трудностей, временных и других критерии, а также их комплексное влияние всего этого на личность сотрудника полиции.

Теоретическая значимость исследования:Работа может пополнить теоретические знания, касающиеся деятельности, личности и образа сотрудника полиции. Полученные данные могут использоваться в учебно-методической литературе и для разработки специальных учебных курсов.

Практическая значимость исследования состоит в том, что теоретические подходы, практические предложения, которые выдвигались в работе, внедрение полученных результатов исследования могут быть использованы в целях разработки мероприятий, направленных на повышение надежности деятельности полиции, на формирование должного образа сотрудника полиции. Полученные данные могут быть использованы для разработки и практического применения, тренинговых программ, направленных на развитие соответствующих личностных качеств сотрудников полиции.

Достоверность результатов обусловлена теоретико-методологической обоснованностью, использованием надежных методов, репрезентативностью выборки, анализом полученных данных с помощью математических методов обработки и автоматизированных статистических программ.

Апробация и внедрение результатов исследования:Работа обсуждалась на заседаниях кафедры общей психологии ЕГУ, Научного совета и кафедры обществоведческих предметов Образовательного комплекса полиции РА. На основе материалов диссертационногоисследования автором разработан учебный курс “Психология профессиональной деятельности сотрудника полиции”, который 2014г. был внедрен в учебную программу магистратуры Образовательного комплекса полиции РА.

Структура работы:Диссертация состоит из введения, двух глав, выводов, практических предложений, списка литературы и приложения. Объем работы составляет 170 страницы. По теме диссертации опубликованы 8 статей.

NAIRA NAZARYAN MAMBRE

PSYCHOLOGICAL PECULIARITIES OF THE POLICE OFFICER'S PERSONALITY CONDITIONED BY THE PROFESSIONAL ACTIVITY

Dissertation on Psychological Sciences candidate degree in "General Psychology, Theory and History of Psychology, Personality psychology" speciality.

Defence of the Dissertation will take place on 2017, March 7, at 12.00 in Armenian State Pedagogical University after Kh.Abovyan at Psychology HAC 064 Professional Council summit. Adress: 0010, Yerevan, RA, Tigran Mets str., 17.

SUMMARY

Modernity: Conceptual changes of the nature of policing which are aimed at raising public trust in the police, new eligibility requirements for a police officer, realities of transforming society, restructuring of the social perceptions system, as well as the fact that psychological peculiarities of the police officer's personality and activity hasn't yet been explored in the Armenian reality, determine the relevance of the psychological analysis of peculiarities characteristic of police officer's personality and professional activity as well as the research on singularity of the police officer's image.

The aim of the research is to study the psychological peculiarities and interconnection of the police officer's personality and professional activity which influence on the self-realization and the image of the modern police officer.

Accordingly, the following issues have been put forward.

1. To carry out theoretical analysis of scientific literature in order to identify the available approaches to the factors influencing the police officer's personality and professional activity, police officer's image and its formation.

2. Analyze the psychological peculiarities of the police officer's professional activity and identify its main components.

3. Through experimental research , reveal the police officer's personality traits and the peculiarities of his image.

4. Examine the interconnection between the police officer's professional activity and personal peculiarities.

5. Outline certain scientific-practical proposals contributing to the reliability of the police officer's activity and aimed at improving his image.

The following working **hypothesis** has been put forward:

Restructuring of the requirements for a police officer and the social perception system influence the formation and demonstration of police officer's personal peculiarities causing obstacles in the process of professional development and leading to professional deformations which impact the police officer's professional self-realization.

Scientific novelty of the thesis: Based on the conceptual changes in the role and nature of policing and the new eligibility requirements for police officers, for the first time in domestic scientific research the peculiarities of the police officer's personality and professional activity and their intercorrection, the various

contradictory factors in his activity, psychological singularity of the modern police officer's image are considered. The psychological analysis of the police officer's professional activity has been carried out singling out the subject of the work, motives, goal, objectives, ways of solution, results. Work methods conditions, difficulties, timing and other criteria, as well as the influence of the above mentioned on the personality of the police officer.

Theoretical significance of the thesis: The thesis can build up the theoretical knowledge related to the police officer's activity, personality and image, enhance researches on theoretical and practical issues related to the police officer's activity and personality. The received data can be used in educational methodical literature and for elaborating specific courses.

Practical significance of the thesis: The theoretical approaches,practical proposals brought forward in the thesis, the introduction of the research outcome can be applied in developing measures for increasing the effectiveness of the police officer'sactivity, shaping proper image of the police officer. The received data can be applied in developing and practicing training programs which will contribute to the increase of the effectiveness of the police officer's activity, shaping positive image of the police officer. Besides, professional psychological compatibility assessment system can be elaborated and introduced in order to identify whether the graduate of the police educational institution meets the requirements for the specific position.

Reliability and validity of the research outcome have been ensured by the theoretical and methodological basis of the thesis, the use of reliable methodical tools in line with the research goal, the data analysis through mathematical processing methods and automated statistical software.

Testing and introduction of the research: The research has been presented at the session of General psychology Chair of the Yerevan State University, Scientific Council of the Police Educational Complex of RA and Chair of Social Sciences of the Police Educational Complex. Based on the materials of the thesis, the author developed the teaching course entitled "Psychology of the Police Officer's professional activity" which was introduced in the Master's program of the Police Educational Complex of RA in 2014.

Structure of the thesis: The thesis consists of introduction, two chapters, conclusions, practical proposals, references, appendixes. On the theme of the dissertation are published 8 scientific articles.